

Շաբաթ 20 Նոյեմբեր 1947.

« Բազմավէպ »-ի խմբագրութեան – Վենետիկ.

Արժանապատիւ Հայրեր,

Թող տուէք ինձ խնդրեմ, թէեւ պայմանների բերումով ակամայից ուշացած, Ձեզ իմ ամենաջերմ շնորհաւորութիւնները և լաւագոյն բարեմաղթութիւնները յայտնելու հայ պարբերական մամուլի նախագետիդ « Բազմավէպ »-ի հարիւրամեակի առթիւ: Հայ գրականութիւնն ու մշակոյթը պարծենալ կարող են իրաւամբ « Բազմավէպ »-ով, որով ոչ միայն մի նոր դարագլուխ է բացուած հայ գրքի և մամուլի, հայկական տպագրութեան պատմութեան մէջ, այլ և հարիւր և աւելի տարիների իր անընդմիջորդ հրատարակութեամբ լաւագոյն ապացոյցն է տուած իր կենսունակութեան, որով միաժամանակ նաեւ՝ հայ խօսքի և գրչի կենսունակութեան: Ի սրտէ մաղթում եմ իրեն նոր հարիւրամեակներ և Ձեզ բոլորիդ, արժանայարգ Մխիթարեան Հայրեր, ուժ ու կարողութիւն անսպառ եռանդով շարունակելու « Բազմավէպ »-ին վիճակուած մեծ առաքելութիւնը:

Սնամ խորին յարգանքներով և ջերմ բարեւանքով՝

Ջերմ Ա. ԱԲԵՂԵԱՆ

Իմ սիրելի Արքանայրս

Իբրեւ աշխարհական Մխիթարեան, վանական Մխիթարեանի մը չափ արդար հպարտանքով ու հրճուանքով, կը մասնակցիմ իմ սիրելի Վանքիս խանդավառ ուրախութիւններուն, երբ նա իր մշակութային հազար նուաճումներէն միոյն, Հայ Մամուլի պարծանք և անոր երէց եղբայր « Բազմավէպ »-ի հարիւրամեակը կը տօնէ:

Վանքիս անքուն պահապան անուշիկ Տիրամայրը իր « Եղիցի »-ներու շարքը թող յաւերժացնէ, ի փառս Բարձրեալին և ի պարծանս և ի պատիւ Ազգիս:

Սիրելի Արքայայր, անշուշտ կը յիշէք Նորընծայարանի, երբեմնի Պետրոսիկը, և վերելի « աշխարհական Մխիթարեանի » յորջորջումը, որ ես, ինքզինքս կը նկատեմ, չէք զլանար ինձ, քանի ես սրտով ու հոգով Մխիթարեան ըլլալէ չեմ դադրած ու դադրելիք ալ չունիմ, որովհետեւ Մեծն Մխիթար Արքայայր ու Ս. Ղազարու Վանքիս հանդէպ ունեցած գողտրիկ սէրս կարելի չէ սրտէս հանել, ու մանկութենէս մնացած այդ անոյշ յիշատակն ու սէրը, իբրեւ մի թանկագին գանձ կը պահեմ սրտիս խորը, որոնց յիշումը շատ մը գոհունակութիւններու առիթ տուած է ինձ:

Պուէնոս-Այրէս

ՊԵՏՐՈՍ ՎՐԹԱՆԵՍԵԱՆ

Պ Ո Ւ

ԱՌ « ԲԱԶՄԱՎԷՊ » ՄԽԻԹԱՐԵԱՆ ՀԱՆԴԵՍՆ

ՎԱՍՆ ՊԱՆԾԱԼԻ ՀԱՐԻՐԱՄԵԱԿԻՆ

(1843 - 1943)

Երեսուցի առ ոտըն զամենայն ըզխոշընդոտս ժամանակի
Նստեալ յալիս ջինջ Վենետիկոյ, ի Սուրբ Ղազար, յօտար աշխարհ,
Ո՛ր խօսիս ըզհայրենեաց մեզ առաւել քան զամս հարիւր,
Որ զառաջինըն լսելի մեզ արարեր զչունչս հոգեղէն
Հարցըն մեծաց որ բղիւսալ կան ի յԱրքայէն Մխիթարայ՝
Բագրատունւոյ, Չամիչեանի, Ինճիճեանի 'ւ Աւիշանի,
Աւգերեանի, Ղազիկեանի, Երեմեանի և Հացունւոյ,
Եւ զառաջինն յայտ արարեր ըզմեծամեծ տաղանդըս մեր
ՉՊէշիքթաշլեան և ըզթերղեան և զՎարուժան, բողբոջս ընտիր,
Որովք ապա առաւել փայլ ըզգեցաւ հայ քերթողութիւն, -
Ողջոյն հարիւր և հինգ ամացդ, ողջոյն անխոնջ Աւետորիդ
Որ վասն հայ անմահ Գրոյն և վասն հայ անմահ Ոգւոյն
Հարեալ զարգելս առաթուր մաքառեցար իբրեւ զառիւծ,
Առ ոչինչ համարելով զամենայն գէպըս աշխարհի:
Ողջոյն հազար՝ աներկեւան և անյողդողդ « Բազմավէպ »-իդ,
Ողջոյն անխոնջ տպարանիդ, ուր ընդ հայ գրոյն լոյս փողփողէ,
Ուր Մեսրոպայ և Սահակայ խայտան հոգիք ոսկեղարեան:
Դու մի կայլակ ես արտասուաց յԱզրիական յալիս հեղեալ,
Հայրենաբաղձ չիթ մի արտօսը յակնողեաց Աւիշանի:
Դու չիթ մի ջուր ես ըմպելի՛ ի մէջ աղի ծովանդնդոյ,
Դու իմաստ հայկազոր ի մէջ իրաց անկարեկիր,
Դու Աջ վերամբարձեալ և կարկառեալ գէպ՝ յԱրարատ,
Դու ոսկեղէն եռաթանի ապողոնեան՝ որ հրամայէ
Ի վեր քան զալիս ձուլման՝ յառնել բարբառն հայ յԱւրոպայ,
Դու մշտաթարմ բաժակ ջրոյ՝ ուր ծաղիկն հայ մընայ միշտ վառ,
Ընկալ զմաղթանս իմ ջերմաջերմ՝ հայ կորովոյ անջնջելի
Ի մեծ փառս քոց սերընդոց՝ ի գրաւական անմահութեան:

ԵԴՈՒԱՐԴ ԳՕԼԱՆՃԵԱՆ

Պուրբէշ. ի 15 Յուլիսի 1937.

ԽԱՆՈԹ. ԽՄԻ. - Եղուարդ Գօլանճեան, որ առաջին համաշխարհային պատեւ
րազմէն առաջ պոլսահայ շրջանակին մէջ ծանօթ էր որպէս գրող և բանաս-
տեղծ, Պուրբէշէն զրկած է « Բազմավէպ »-ի հարիւրամեակին նուիրուած այս
ձօնը՝ զոր խմբագրութիւնս սիրով կը հրատարակէ հոս ի յարգանս հեղինա-
կին և ի սէր նախնեաց լեզուին: